ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 31 հոկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Սերինե Ֆլջյանի անհատական դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Սերինե Ֆլջյանը 2012թ. հոկտեմբերի 3-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

... 1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի 2-րդ պարբերությունը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից տրված այն մեկնաբանությամբ, որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իր որոշման մեջ Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքի իրավաբանական ուժը կորցնելը հետաձգելը, այդ որոշմանը զրկում է նոր հանգամանք լինելուց եւ հնարավորություն է տալիս Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենք պարունակող դատական ակտի ուժի մեջ մնալու համար, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 18 եւ 19 հոդվածներին հակասող եւ անվավեր.

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով իրավակիրառական պրակտիկայում տարածվում է մինչ այդ դրույթի

ընդունումը ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների վրա, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19 եւ 42 հոդվածներին հակասող եւ անվավեր:

Դիմումի հեղինակը գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասը, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասը՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված այն մեկնաբանությամբ, որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իր որոշման մեջ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքի իրավաբանական ուժը կորցնելը հետաձգելը, այդ որոշմանը զրկում է նոր հանգամանք լինելուց եւ հնարավորություն է տալիս Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենք պարունակող դատական ակտի ուժի մեջ մնալու համար, հակասում է Սահմանադրության 3, 18 եւ 19-րդ հոդվածներին, քանի որ անձի իրավունքների դատական պաշտպանությունը, այդ թվում՝ սահմանադրական դատարանում, դարձնում է անարդյունավետ:

Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածն այն մեկնաբանությամբ, որ իրավակիրառական պրակտիկայում տարածվում է նաեւ մինչ այդ դրույթի ընդունումը ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների վրա, որոնցով որոշման պատճառաբանական մասում փաստվել է, որ օրենքը կիրառվել է դրա սահմանադրաիրավական բովանդակությանը չհամապատասխանող մեկնաբանությամբ, հակասում է Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների, ինչպես նաեւ 42-րդ հոդվածի այն դրույթին, ըստ որի՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները եւ այլ իրավական ակտեր հետադարձ ուժ չունեն:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով, դատական կազմի կարծիքով գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

1. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի 2-րդ պարբերության վերաբերյալ առկա է 11.05.2007թ. ՍԴՈ-701 որոշումը: Այդ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը վիճարկվող իրավադրույթի վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ «...վիճարկվող դրույթի իրավական բովանդակությունն ... անհրաժեշտաբար բխում է Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթներից: ... Ինչ վերաբերում է նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա այն առաջ է գալիս

սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով»:

Սակայն նշված որոշման կայացումից հետո իրավակիրառական պրակտիկան զարգացավ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին հակառակ տրամաբանությամբ: Ստեղծված իրավիճակին ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է 2011թ. հուլիսի 15-ի ՍԴՈ-984 որոշման մեջ՝ մատնանշելով, մասնավորապես, որ իրավակիրառական պրակտիկայում առկա են դեպքեր, երբ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի կիրառմամբ ընդունված դատական ակտի վերանայման պահանջի առնչությամբ նույնիսկ մերժվում է վերանայման վարույթ հարուցելու պահանջը, ի թիվս այլնի, նաեւ այն պատճառաբանությամբ, որ սահմանադրական դատարանը, դատարանների կողմից կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող ճանաչելով՝ տարաժամկետել է հակասահմանադրական ճանաչված նորմի ուժը կորցնելը, եւ բողոք բերող անձը նման պայմաններում չի ապացուցել եւ հիմնավորել նոր հանգամանքի առկայությունը: Ավելին, այն դեպքում, երբ բողոքը ներկայացվում է տարաժամկետման ավարտից հետո, բողոքը վերադարձվում է այն պատճառաբանությամբ, որ բաց է թողնված բողոք բերելու համար օրենքով սահմանված եռամսյա ժամկետը, եւ այս կապակցությամբ մեկ անգամ եւս վերահաստատել է ՍԴՈ-701 որոշման մեջ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի 2-րդ պարբերության վերաբերյալ արտահայտած իր իրավական դիրքորոշումն առ այն, որ «...նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությունն առաջ է գալիս սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով»:

Դիմումում նշված փաստական հանգամանքների ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում այն պատճառաբանությամբ, որ՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի ուժով եւ ՀՀ սահմանադրական դատարանի 15.07.2011թ. թիվ ՍԴՈ-984 որոշման եզրափակիչ մասի 5-րդ կետի հիմքով մինչեւ 01.11.2011 թվականը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանել է ՀՀ Սահմանադրությանը»: Իրավակիրառական պրակտիկայում խնդիրն առկա է, սակայն այն, կարծում ենք, պայմանավորված չէ դիմողների կողմից վիճարկվող՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի 2-րդ պարբերու-

թյամբ, քանի որ վերջինիս վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-701 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշում:

2. Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33 հոդվածի 1-ին մասին, ապա այս մասով, դատական կազմի կարծիքով, դիմումն ակնհայտ անհիմն է: Դիմողի կողմից նշյալ դրույթի հակասահմանադրականության հիմնավորմանն ուղղված իրավական փաստարկները, ըստ որոնց՝ նշյալ դրույթն այնքանով, որքանով իրավակիրառական պրակտիկայում տարածվում է մինչ այդ դրույթի ընդունումը ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների վրա, հիմնազուրկ են եւ սահմանադրականության խնդիր չեն հարուցում: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտնել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որեւէ հիմնավորում:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման, քանի որ՝

- դիմումն ակնհայտ անհիմն է,

- «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի 2-րդ պարբերության վերաբերյալ առկա է ՍԴՈ-701 որոշումը,

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ առկա է ՍԴՈ-984 որոշումը,

- դիմողը բարձրացրել է վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Սերինե Ֆլջյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

31 հոկտեմբերի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/1-24